The article is dedicated to Vagram Rabuni views on the problem of the emergence of kingdom and kingdom power, which took place in the medieval political and legal thought. In the article it is shown that, in contrast to the most of medieval thinkers, Rabuni rejects the divine origin of the kingdom (state) and royal power, considering them a consequence of the fall of man and the deviation of people from divine laws. Rabuni formulates the basic moral virtues of the king and princes necessary for the just administration of the state and people.

Key words: Vagram Rabuni, Cilician Armenia, kingdom, power, sin, divine law, moral virtues, justice, organic theory**.**

ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ «ՄԻՐԱՔ ԵՒ ՍԱՄՈՒԷԼ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ (Ծննդյան 200-ամյակի առթիվ)

Լիլիթ Սարվազյան
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող

Արևմտահայ հասարակական-քաղաքական գործիչ, ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոս Մկրտիչ Խրիմյանը (Խրիմյան Հայրիկ, 1820-1907թթ.) հայտնի է ոչ միայն իր ազգային-քաղաքական ու հոգևոր-մշակութային գործունեությամբ, այլև գրական ստեղծագործությամբ ու քաղաքական հրապարակախոսությամբ[1]: Նրա աշխատություններում առկա խնդրակարգը ներառում է քրիստոնեական արժեհամակարգին, Հայ եկեղեցուն, արևմտահայ սահմանադրական շարժմանը, ազգային բարեփոխումներին, ազգի գոյապահպանությանն ու առաջադիմությանը վերաբերող բազմաթիվ հիմնահարցեր:

Առանձնակի կարևորություն ունի Մ. Խրիմյանի ***«Միրաք եւ Սամուէլ»*** աշխատությունը (1878թ.), որում արտացոլված

[1] Մկրտիչ Խրիմյանի կյանքի և ազգային գործունեության մասին Տե՛ս **Օրմանեան Մ.,** Ազգապատում, Մասն Գ., Երուսաղէմ, 1927, էջ 4694-4698, 5166-5184: **Աճէմեան Հ.,** Հայոց Հայրիկ, Թավրիզ, 1929: **Գյոզալեան Գ.,** Մկրտիչ Խրիմեան (Գաղափարների աշխարհ), Պէյրութ, 1954: **Կոստանդյան Է.,** Մկրտիչ Խրիմյան (մահվան 90-ամյա տարելիցի առթիվ) // Լրաբեր հասարակական գիտությունների, 1997, N3, էջ 33-44: **Կոստանդյան Է.,** Մկրտիչ Խրիմյան, Եր., 2000:

փիլիսոփայաքաղաքական գաղափարներն ունեն արդիական հնչեղություն։ Մտածողի քաղաքական գաղափարախոսության հիմքում ***մարդու*** հիմնախնդիրն է, մասնավորապես՝ մարդու քաղաքական էության, ազատության, իրավունքների և պարտականությունների հարաբերակցության, հասարակական (ազգային) կյանքում նրա դերակատարության խոհափիլիսոփայական մեկնաբանությունները։

Ըստ Խրիմյանի՝ մարդն արարչագործության գերագույն արդյունքն է։ Մարդու աստվածանմանությունը նա բացատրում է Աստծուց մարդուն շնորհված հատկանիշներով, այն է՝ «...անմահ հոգին, եւ բնաւորութիւն, որով մարդն կը զանազանի բոլոր ստեղծական արարածներէն, խօսուն լեզուով, բանականութեամբ եւ հանճարով ճոխացած»[2]։ Ընդգծելով մարդու հասարակական էությունը, տարբերությունը և առավելությունն այլ արարածներից՝ Խրիմյանը հաստատում է, որ մարդու առաջադիմությունը պայմանավորված է նրա հասարակական կյանքով. «Մարդոյն ընկերական կեանքէն յառաջ եկաւ աշխարհաշինութիւն. մարդիկ աշխարհիս վերայ տիրապէս տիրեցին եւ տիրապէս կատարեցաւ Աստուծոյ հրամանն»[3]։ Հասարակական կյանքում մարդու կոչումը առաքինի գործերն են, այսինքն՝ աստվածապաշտությունը, հայրենասիրությունը, ազգասիրությունը, ազատախոհությունը, արդարա-դատությունը, օրինական կառավարումը, իրավունքների պաշտպանությունը, պարտականությունների կատարումը և այլն։

Խրիմյանի համոզմամբ՝ մարդու հասարակական գործունեության հաջողության երաշխիքը բնական ու բարոյական օրենքների իմացությունն է։ Համեմատելով ***աստվածային-բնական*** և ***դրական*** օրենքները՝ նա գրում է. «Աստուած իւր պետական աթոռը երկնից մէջ դնելով՝ բոլոր տիեզերքը՝ բնական եւ յաւիտենական օրէնքով կը կառավարէ. իւր օրէնքներն անշարժ եւ անփոփոխ են եւ ոչ ոք կարող է զայն շրջել կամ խախտել. ինչպէս աշխարհիս դրական եւ քաղաքային օրէնքներ զորս միայն մատ կը գրէ եւ միւսին կ'եղծանէ »[4]։ Կենդանի բոլոր արարածները, այդ թվում՝ մարդը ենթակա են բնական

---

[2] **Խրիմեան Հայրիկ,** Սիրաք եւ Սամուէլ // Ամբողջական երկեր, Նիւ Եորք, 1929, էջ 412։

[3] Նույն տեղում, էջ 413։

[4] Նույն տեղում, էջ 416։

օրէնքների ներգործությանը: Սակայն բարոյական օրէնքները վերաբերում են միայն բանական մարդուն: Ընդ որում՝ «Ինչպէս բնական օրինաց, նոյնպէս եւ բարոյական կամ գրաւոր օրինաց աղբիւրը նոյն յաւիտենական իմաստութիւնն է»[5]:

Աստված մարդու հոգում դրոշմել է ***Խղճի օրենքը.*** «Ամեն ինչ որ կամենում էք՝ թէ ձեզ անեն մարդիկ, այնպէս էլ դուք արէք նորանց. որովհետեւ այս է օրէնքը եւ մարգարէները»[6]: ***Ոսկե կանոնը*** հասարակական ու ազգային հարաբերությունները կարգավորող սահմանադրական օրենքների ոգեղեն հենքն է, որից բխում են դրական օրենքները: Ըստ Խրիմյանի՝ այս գերագույն օրենքը բավական էր մարդկային համակեցության համար, սակայն բազում ազգեր խախտեցին այն և խիստ պատժվեցին: ***Բարոյական օրենքները*** Աստված ավանդել է մարդուն Մովսեսի և Հիսուսի միջոցով, որպեսզի «... մարդն եթէ մոռնայ իւր խղճին բնական օրէնքն, գէթ յիշէ ու կարդայ Աստուծոյ դրական եւ գրական օրէնքները, որ միշտ լոյս կուտան եւ յուշարար լինելով կ'ուղղեն մարդուն խոտորեալ կեանքը»[7]:

Հիմնվելով Աստվածադիր օրենքների վրա՝ Խրիմյանը ***բնական անհավասարության օրենքը*** մեկնաբանում է որպես մարդկային հասարակությունն ամրապնդող, միասնականացնող հզոր գործոն: Ըստ նրա՝ ***մարդիկ հավասար են միայն Աստծո առջև:*** Սակայն ողջ Տիեզերքը գործառում է անհավասարության օրենքով, այն առկա է և՛ կենդանական աշխարհում, և՛ մարդկային՝ հասարակական կյանքում:

Մարդիկ տարբերվում են արտաքինով, զգայություններով, մտածելակերպով, վարք ու բարքով, կրթությամբ, ընդունակություններով, սկզբունքներով և այլն. «Մարդկային ընկերութիւն եւ քաղաքային աշխարհ նոյնպէս անհաւասար տարերքներէն կազմուած է: Աշխարհ՝ աշխարհի հետ, ազգ՝ ազգի հետ, ժողովուրդ՝ ժողովրդի հետ, թագաւոր՝ թագաւորի հետ, իշխան՝ իշխանի հետ, կառավարութիւն՝ կառավարու-թեան հետ... եւ այլ շատ հանգամանքներ իրարու հետ անհաւասար են»: Նույնիսկ միևնույն պետությունը կամ ազգը անհավասար տարրերից են բաղկացած: Հետևաբար՝ «...աշխարհիս մարդկային ընկերութեան հզօրագոյն

---

[5] Նույն տեղում, էջ 419:

[6] **Մատթ.,** Գլ. է, 12:

[7] **Խրիմեան Հայրիկ,** Սիրաք եւ Սամուէլ, էջ 407:

կապն անհաւասարութեան օրէնքն է, որ թագաւորը՝ հպատակ ժողովրդին հետ, իշխան՝ գաւառին հետ, զօրավար՝ զօրքին հետ, առաջնորդ՝ եկեղեցւոյն հետ... կապեր է. եւ բոլոր անհատական մարդիկ այդ անլոյծ կապով միացնելով՝ մեր ընկերական տարերք կազմեր է»[8]:

Խրիմյանը մերժում է այն կարծիքները, ըստ որոնց՝ հասարակական կյանքում հավասարության սկզբունքի կիրառմամբ առավել արդարություն կհաստատեր, և չէին լինի հարուստ ու աղքատ, իշխող և հպատակ: Նրա հավաստմամբ՝ Աստված կամեցել է, որ անհավասարության օրենքով հասարակությունը կենսունակ լինի, իսկ եթե ամեն ինչի հիմքում հավասարություն լիներ, կփլուզվեր մարդկային համակեցության միասնականությունը, և առաջադիմություն չէր լինի: Արարիչն իր գերագույն իմաստնությամբ «...մարդն ընկերական, բանաւոր եւ ազատակամ ստեղծել է. նորա լեզուն եւ ոտքեր բնական օրէնքով չէ կապեր... մարդոյն եւ ընկերական կեանքին մէջ մոիչ զօրութիւն մի կայ, որ ամէն կարգի եւ վիճակի մարդ կը մղէ եւ կը վարէ դէպի յառաջադիմութիւն»[9]: Այս զորությունը մարդկանց անհավասարությունն է: Օրինաչափ է, որ հասարակական կյանքում անհատներն ինքնադրսևորվում են՝ ըստ իրենց նպատակների, ընդունակությունների, ցանկությունների, ազգային խնդիրները լուծելու պատրաստակամության աստիճանի: ***Անհավասարության օրենքը ստեղծում է բնական մրցակցություն***՝ թագավորների, իշխանների, աշխատավորների, մտավորականների միջև: Մրցակցությունն առաջադիմության կարևոր գործոններից մեկն է:

«Սիրաք եւ Սամուէլ» աշխատության մեջ մեկնաբանվում են իշխանության և իրավունքի աղբյուրին, պետություն-ժողովուրդ հարաբերակցությանը, կառավարման ձևերին վերաբերող հիմնահարցեր: Ընդունելով ***պետական իշխանության և օրենքի աստվածային ծագումը***՝ Խրիմյանը հաստատում է. «Իշխանութիւն եւ օրէնք վերին տեսչութեան յաւիտենական կարգադրութիւնն է, որպէս զի մարդիկ երկիւղածութեամբ եւ բանաւարութեամբ ապրին ընկերական կեանքին մէջ»[10]: Միաժամանակ նա բացատրում է իշխանության

[8] Նույն տեղում, էջ 423:
[9] Նույն տեղում, էջ 424:
[10] Նույն տեղում, էջ 432:

ծագման պատճառները. «...իշխանութիւն մարդոց անհաւասար կեանքէն, խռովարար ոգիէն, տիրողական բուռն ձգտումէն եւ զօրութենէն ծներ է»[11]:

Հիմնվելով անտիկ, եվրոպական և ազգային քաղաքական գաղափարների վրա՝ մտածողը հաստատում է. «...իշխանութեան առաջին խանձարուրն ***ընտանիքն*** է. եւ մինչեւ ցայսօր իբրեւ բնական օրէնք ընտանեաց հայրն կ'իշխէ բոլոր գերդաստանին վերայ, եւ ինքն իւր տան մէջ նախաթոռ բազմելով կը վարէ ու կը կառավարէ զայն, որպէս զի խաղաղութեան եւ երկիւղած հնազանդութեան մէջ կենայ ընտանեկան կեանք»[12]:

Ընտանիքների միավորումից ձևավորվել է ***սոցիալական համակեցություն*** կամ ***քաղաքացիական հասարակություն,*** որտեղ մշտական երկպառակություններին վերջ դնելու համար ընտրվել են «տանուտերէր», «դատաւոր իշխաններ»՝ ձևավորելով ***«տանուտիրական իշխանութիւն»:*** Կառավարման այս ձևի զարգացման արդյունքում կազմավորվել են փոքր իշխանություններ՝ մեծ աշխարհակալների իշխանության ներքո:

Խրիմյանը չի ընդունում միապետական-կայսերական կառավարման ձևը, որի օրոք՝ անտեսվում են Աստվածային օրենքներն ու ժողովուրդների բնական իրավունքները: Ըստ նրա՝ յուրաքանչյուր այսպիսի իշխանություն «իւր ծերութիւն եւ վախճանն ունի»: Այդպես տապալվել են Բաբելոնական, Ասորական, Մակեդոնական, Հռոմեական իշխանությունները, քանզի «...ժամանակի ահեղ տապանով պիտի կտրէ ու կործանէ այն ամէն իշխանութեան

---

[11] Նույն տեղում, էջ 428:

[12] Նույն տեղում, էջ 428-429: Դեռևս Արիստոտելի «Պոլիտիկա» աշխատության մեջ ընտանիքն արժեվորվել է որպես հասարակության քաղաքական կազմակերպման նախնական աստիճան: Տե՛ս **Միրումյան Կ.**, Քաղաքական ուսմունքների պատմություն, Եր., 2005, էջ 75-76: Ժան Բոդենի փիլիսոփայաքաղաքական մեկնաբանություններում ընտանիքը ոչ միայն պետության ծագման, այլև դրա գոյության հիմքն է, իսկ «բարեկարգ ընտանիքը պետության մոդելն է»: Տե՛ս նշվ. աշխ., էջ 289: Հայ մտածողները նույնպես հիմնվում են պետության ծագման նահապետական տեսության վրա: Օրինակ՝ Մ. Մամուրյանը ընտանիքը համարում է **«**Ժողովրդեան մի մանրանկար**»**, **«**մանր հայրենիք», «ընկերային շղթային առաջին օղակ**»:** Տե՛ս **Մամուրեան Մ.**, Ընտանիք, Մաս Ա // Արեւելեան Մամուլ, Զմիւռնիա, 1873, Թիւ 6: Ընտանեկան ոգի, Մաս Ա // Արեւելեան Մամուլ, 1890, էջ 491-492:

ծառերը, որ երկնից զօրութեան դէմ կը բարձրանան եւ կը ջախջախեն ժողովուրդին կեանք եւ զօրութիւն»[13]:

Մյուս կողմից՝ Խրիմյանը քննադատում է ծայրահեղ ազատամտականներին, ովքեր մերժում են ցանկացած իշխանություն՝ քարոզելով ազատ, ինքնավար հասարակության գաղափարը, ավելորդ են համարում բանակը, իրավապահ մարմինների գոյությունը, հարկերը, տուրքերը, պետության առանցքային գործառույթները: Մտածողի համոզմամբ՝ «Մարդկային ընկերութիւն բնաւ կարելի չէ որ առանց իշխանութեան, առանց օրինաց, առանց դատաստանի եւ հատուցման այս աշխարհիս վերայ ապրի եւ խաղաղ կեանք վարէ»[14]: Ակնհայտ է, որ Խրիմյանը ոչ միայն պաշտպանում է ***ազգային-պետական իշխանության*** անհրաժեշտության գաղափարը, այլև ***իշխանության բաժանման սկզբունքը***՝ շեշտելով օրենսդիր, գործադիր ու դատական գերատեսչությունների ու իրավապահ մարմինների գործառույթների կարևորությունը:

Մտածողի համոզմամբ՝ ողջ աշխարհում տարբեր ազգերի, նույնիսկ մեկ ազգի կամ համազգի ընտանիքի հնարավոր չէ կառավարել՝ առանց հայրական իշխանության: Անիշխան հասարակությունը ենթակա է թե՛ արտաքին բռնազավթումների՝ ներքաշվելով պատերազմների մեջ, թե՛ ներքին երկպառակությունների ու խռովությունների: Քաղաքակիրթ աշխարհն առանց իշխանության կարող էր խաղաղ գոյատևել, եթե հասներ բարձրագույն կատարելության՝ ընդունելով ու կիրառելով «Ոսկե կանոնը»: Բայց դա, ըստ Խրիմյանի, «ազատասէր մարդոյն երեւակայութեան երազն է»: Նույնիսկ եվրոպական առաջադեմ երկրներում և ԱՄՆ-ում հնարավոր չէ պետական կառավարման համակարգի բացակայության պայմաններում պաշտպանել հասարակության անվտանգությունն ու պահպանել մշակութային-քաղաքակրթական արժեքները: Հետևաբար՝ մերժելի են անիշխան հասարակության ու մարդկանց անսահմանափակ ազատության վերաբերյալ արմատական ազատամտական գաղափարները:

Ժողովուրդ-իշխանություն հարաբերակցության հիմնահարցը մշտապես առկա է եղել բոլոր ժամանակների հայ մտածողների

---

[13] **Խրիմեան Հայրիկ,** Սիրաք եւ Սամուէլ, էջ 430:

[14] Նույնը:

քաղաքական հայեցակարգերում։ Այն առանցքային է նաև Մկրտիչ Խրիմյանի «Սիրաք եւ Սամուէլ» աշխատության մեջ, որտեղ հեղինակը գրում է. «Իշխանութիւն ժողովուրդին եւ ժողովուրդ իշխանութեան միշտ պէտք են աշխարհիս վերայ. եթէ մին կամ միւս պակասի՝ կը դադարի կամ կը խոտորի ընկերվարութեան կեանք»[15]։

Ըստ մտածողի՝ ***իշխանության ու ժողովրդի պարտականությունների և իրավունքների համաչափությունն ու հավասարակշռությունը արդարության չափորոշիչն են։*** Նա սահմանում է իշխող կառավարության՝ որպես երկրի ու ժողովրդի անվտանգության երաշխավորի և ավանդապահի պարտականությունները.

● Կառավարությունը պարտավոր է ընդունել, որ իշխանությունը ժողովրդին շնորհված է աստվածապետական զորությամբ՝ իբրև ավանդ։ Սողոմոն իմաստունի խոսքով. «Ի տեառնէ տուաւ ձեզ հարստութիւնդ եւ իշխանութիւնդ ի Բարձրելոյն, որ պահանջեսցէ զգործս ձեր եւ քննեսցէ զխորհուրդս»[16]։

● Իշխանությունը պետք է հաշվետու լինի ոչ միայն Աստծուն, այլև ժողովրդին, եթե ընտրված է սահմանադրական ընտրակարգով։ Հարկ է նշել, որ «Ազգային Սահմանադրության» հիմնարար սկզբունքներից է ***ներկայացուցչական*** սկզբունքը. «Վարչութիւնը՝ ազգային ըլլալու համար, պէտք է Երեսփոխանական ըլլայ»[17]։ Իր ներկայացուցիչներով ժողովուրդն իրականացնում է օրենսդրական, վերահսկիչ ու հաշվառության գործառույթներ։ Մ. Խրիմյանի գաղափարակից Մաղաքիա Օրմանյանի մեկնաբանությամբ՝ «…լաւագոյն է անսալ ձայնին Աստուծոյ, որ երբեմն կը յայտնուի ի ձայնիւ ժողովրդեան և երբեմն ձայնիւ մեծաւորաց, բայց ապահովագոյն ևս երբ երկու ձայները կը ձայնակցին»[18]։

● Իշխանությունը պարտավոր է «…արդարութիւն սիրել եւ օրինաց իրաւացի վճիռը արդարութեամբ ի գործ դնել»[19]։ Խրիմյանի համոզմամբ՝ իշխանության զորության և հաստատունության երաշխիքը արդա-րության ու իրավահավասարության սկզբունքներով

---

[15] Նույն տեղում, էջ 428։

[16] Նույն տեղում, էջ 432։

[17] Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Հիմնական Սկզբունք, Կէտ Ե, Կ.Պոլիս, 1863, էջ 12։

[18] Բանախօսութիւն **Գեր. Տ. Օրմանեանի** // Մասիս, Կ.Պոլիս, 1880, Թիւ 2695։

[19] **Խրիմեան Հայրիկ,** Սիրաք եւ Սամուէլ, էջ 432։

կառավարումն է։ Հետևաբար՝ «...իւր ամենամեծ պարտիքն է, որ երկրին օրէնք անաչառ ճշդութեամբ հաւասարապէս գործադրէ տկարին եւ զօրաւորին վերայ... չը թողուլ, որ զորաւորներ հեստեն օրէնքին դէմը. եւ նոքա, որ կարգեալ են օրէնք պաշտպանելու՝ նոքա զեղծանին օրինաց մէջ եւ առ ոչինչ համարին զայն»[20]։ Նա զգուշացնում է, որ պաշտոնյաների իրավախախտումների հետևանքով մի կողմից օտար թշնամիներն են հզորանում, մյուս կողմից՝ երկրում հասունանում է ներքին ընդդիմություն, ինչը հանգեցնում է ոչ միայն ներքին խռովությունների ու ապստամբության՝ իշխող կառավարության դեմ, այլև դավաճանության՝ սեփական հայրենիքին ու ազգին։

• Իշխանության գերագույն պարտականությունը երկրի անվտանգության ապահովումն է, ինչպես նաև ժողովրդի բարօրության, բարգավաճման և առաջադիմության մասին հոգածությունը՝ «...ուղղապէս խորհելով, որ իշխանութեան աթոռը՝ ժողովուրդի պատուանդանին վերայ հաստատուած է, եւ երբ ժողովուրդ կործանի՝ անշուշտ իշխանութիւնն եւս կանգուն չի մնար»[21]։

• Իշխանությունն իրավազոր է ժողովրդից չափավոր հարկեր պահանջել, բայց ծանր հարկերով չկեղեքել նրան։ Իշխանությանն ու ժողովրդին մեկ միասնական օրգանական ամբողջություն համարելով՝ Խրիմյանը հավաստում է, որ եթե ջլատվեն ժողովրդի ուժն ու ոգին, իշխանությունը նույնպես կթուլանա, «...զի ով չգիտեր թէ ժողովուրդն իբրեւ գործող անդամ կը համարուի կառավարութեան. երբ անդամներ ուժաթափին՝ գլուխն եւս նորա կ'ուժաթափի, այնուհետեւ կը կորուսանէ իւր խորհուրդ... եւ յայնժամ ժողովուրդին եւ իշխանութեան զօրութիւն միապէս կ'սպառին եւ երկրին վերայ կը հասնի եւ կը տիրէ աղետաբեր վիճակ»[22]։

• Որպես ազգային ավանդույթների պահպանման երաշխավոր՝ իշխանությունը պետք է վերահսկի ժողովրդի վարքն ու բարքը, բացառի օտար բարքերի և արատավոր սովորույթների ներմուծումը ազգային-հասարակական կյանք։

---

[20] Նույն տեղում, էջ 433։

[21] Նույն տեղում, էջ 432-433։

[22] Նույն տեղում, էջ 433։

• Իշխանությունը պարտավոր է իմաստնությամբ տնօրինել երկրի նյութական հարստությունը՝ թույլ չտալով, որ ազգային կապիտալը արտահոսի հայրենիքից դուրս: Օրինական որոշումներով ու ազգային շահերը պաշտպանելու քաղաքականությամբ պետք է ապահովել երկրի տնտեսական հզորությունը՝ նպաստելով ժողովրդի բարեկեցությանը, պաշտպանելով նրա սեփականության և աշխատանքի արդյունքներից օգտվելու իրավունքները:

• Իշխանության սրբազան պարտքն է՝ «...միշտ խաղաղութիւն սիրել, խաղաղութեամբ կառավարել, եւ ամէն հնարաւոր միջոցներ ի գործ դնելով պատերազմ չը յարուցանել ոչ ուրիշ իշխանութեան դէմ, եւ ոչ պատճառ տալով ուրիշ իշխանութեան մը՝ իւր դէմը»[23]: Սակայն, եթե խախտվեն միջազգային դաշնակցության օրենքները, և օտար որևէ պետություն բռնազավթիչ գործողություններ ծավալի, ապա կառավարության «...պարտիք եւ իրաւունքն է պատերազմ հրատարակել, որ թշնամին չոտնահարէ երկրին ազատութիւն եւ իրաւունքը»[24]: Միաժամանակ Խրիմյանը զգուշացնում է, որ իշխանությունը պարտավոր է ***ճիշտ հաշվարկել սեփական երկրի ու ժողովրդի զորությունը, թշնամու դեմ պատերազմելու առավելագույն հնարավորությունները:*** Հակառակ պարագայում՝ առավել խելամիտ է խնայել ժողովրդի զավակների կյանքը, զինադադար հայտարարել ու հաշտություն կնքել, «...թէ մեծ եւ թէ փոքր զոհողութեամբ խաղաղութիւն հաստատել, քան թէ պատերազմով երկրաւոր լինել»[25]:

• Իշխանության ներքին քաղաքականության գլխավոր ուղղություններից է ազգային կրթության, գիտության զարգացմանը նպաստելը[26]: Հաշվի առնելով նախորդ և իր ժամանակի հայ

---

[23] Նույն տեղում, էջ 434:

[24] Նույնը:

[25] Նույն տեղում, էջ 435:

[26] XIX դարի ազգային սահմանադրական քաղաքականության գլխավոր ուղղություններից էին ազգային կրթության ու դաստիարակության էության, նպատակի, մեթոդների, կրթօջախների կազմակերպման, կրթության ոլորտի պաշտոնյաների գործառույթների, ուսումնական գործընթացի կանոնակարգման և այլ հիմնախնդիրների իմաստավորումն ու լուծումը: Հանուն ազգային առաջադիմության՝ Ազգային ժողովը 1881թ. հունվարի 23-ին քննարկեց Կրթության օրենքը: Տե՛ս **«Ծրագիր Ընդհանուր Օրինաց Ազգային կրթութեան»** // Ատենագրութիւնք Երեսփխանական Ընդհանուր ժողովոյ 1880-81, Կ.Պոլիս, 1881, էջ 559-608: Կրթության օրենքի մեկնաբանությունը Տե՛ս **Սարվազյան Լ.,** Ազգային կրթության և դաստիարակության սահմանադրական

գործիչների մշակու-թային քաղաքականության նպատակն ու միտումները՝ Խրիմյանը հավաստում է. «...երկրին բարգաւաճանք ժողովուրդին լուսաւոր կրթութենէն կը ծնի, ինչպէս որ թշուառութիւնը՝ նորա տգիտութենէն»[27]: Նա աղետալի ու արատավոր է համարում այն կառավարությանը, որը փորձում է ժողովրդին հնազանդեցնել՝ տգիտության ու աղքատության մեջ պահելով, կարծելով, թե տգետ ժողովուրդը հեշտ կառավարելի է: Սակայն պատմությունը վկայում է, որ նման իրավիճակում առաջադիմության ու բարեկեցության հեռանկարից զրկվելով՝ հենց ժողովուրդն է ըմբոստանում ու պահանջում կառավարության հրաժարականը:

Իր աշխատության մեջ Խրիմյանը վերահիմաստավորում է կառավարման համակարգում ***պաշտոնյաների ընտրության*** արևմտյան և ազգային ավանդական սկզբունքները: Հետևելով անտիկ, եվրոպական և ամերիկյան քաղաքագետ-փիլիսոփաներին՝ նա հաստատում է, որ պետությունը պետք է կառավարի կառավարման արվեստին տիրա-պետող ***քաղաքական ընտրախավը:*** Ժողովուրդն էլ պետք է բարձր իրավագիտակցությամբ սովորի պետության օրենքները, «...որպէս զի օրինավարներ ժողովուրդի անգիտութեան համար չը համարձակին նոյն իսկ օրէնքով հարստահարել»[28]:

Այս համատեքստում Խրիմյանը մեկնաբանում է ***իշխանության սուբյեկտի՝ ազնվականության, կառավարող քաղաքական վերնախավի*** էական հատկանիշները. «Ճշմարիտ ազնվականութեան նշան հոգւով մեծութիւնն է, ոչ հողն է եւ ոչ ոսկին, ով որ ունի զայն: Նա է աշխարհիս տիրապէս ազնուական, որոյ փառք միայն ժողովրդասիրութեան մէջ կը փայլի»[29]: Ակնհայտ է կառավարման ազնվապետական ձևի ջատագով անտիկ քաղաքական փիլիսոփաների (Լիկուրգոս, Սոկրատես, Հերակ-լիտես, Պլատոն, Արիստոտել և այլք) գաղա-փարների ազդեցությունը:

Ըստ Խրիմյանի՝ հասարակության մեծագույն մասը ժողովուրդն է, որից սերում են ազնվականները, իշխանները, թագավորները, զինվորները, արհեստավորները, ռամիկները և այլն: Գնահատելով

կանոնակարգման հիմնախնդիրը, Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, Պրակ 5, Եր., 2003, էջ 158-179:

[27] **Խրիմեան Հայրիկ,** Սիրաք եւ Սամուէլ, էջ 435:

[28] Նույն տեղում, էջ 437:

[29] Նույն տեղում, էջ 438:

յուրաքանչյուր խավի գործունեության նշանակությունը պետական ու հասարակական գործընթացներում՝ Խրիմյանը հաստատում է. «Ժողովուրդ մարդկային ընկերութեան մէջ՝ բուն մարդոց կեանք եւ պիտոյք կազմող եւ պատրաստող ամենաշխատ եւ պիտանի օգտակար մասն է»[30]: Ժողովուրդն է տնտեսական բարիքների արտադրողը, մշակութային արժեքների ստեղծողն ու կրողը, առաջադիմության ծավալողը, Հայրենիքը պաշտպանողը: Սակայն ազնվականությանը՝ «...այս վերակարգ դասուն կը պատկանի աշխարհավարութիւն, աշխարհա-շինութիւն, քաղաքագիտութիւն, դատաւորութիւն եւ այլն»[31]: Հետևաբար՝ ազնվականները պետք է լինեն ժողովրդից առավել կրթված, բարեհոգի, հանճարեղ ու իմաստուն, քանզի երկրի կառավարումը նրանց է վստահվում. «Այդ վարիչ իշխանական կարգն է որ կը խորհի, կը կարգադրէ, եւ յառաջ կը վարէ քաղաքակրթութեան կառք»[32]:

Միաժամանակ Խրիմյանը հորդորում է, որ ազնվականությունը, ունենալով իրավունքների առավելություն, պետք է այդ իրավազորությանը համահունչ պատասխանատվություն կրի երկրի ու ժողովրդի առջև: Հասկանալի է, որ սեփական աշխատանքով հարստացած ազնվականները հազվագյուտ երևույթ են, այն էլ վաճառականության և արհեստավորության ասպարեզներում միայն: Կառավարման համար առավել կարևոր է «...հոգւոյն եւ բարուց ազնուականութիւն, որ բարոյական առաքինութեան օրէնքներ կը պահէ, ժողովրդասէր է եւ... չի մեծամտեր»[33]: Այսպիսի հատկանիշներով օժտված ազնվականները նյութապաշտ ու փառասեր չեն, նպաստում են ազգային մշակույթի ու գիտության զարգացմանը, երկրի տնտեսության բարգա-վաճմանը, պաշտպանում են ժողովրդի քաղաքացիական իրավունքներն ու ազգային շահերը: Մինչդեռ ամբարտավան կառավարիչները, զրկվելով ժողովրդի վստահությունից ու աջակցությունից, պաշտոնանկ են արվում:

Այդպիսով՝ ժողովուրդ-իշխանություն հարաբերակցության մեջ Մկրտիչ Խրիմյանը կարևորում է փոխադարձ վստահությունը, փոխգործակցությունը, ազգասիրությունը, հայրենասիրությունը,

---

[30] Նույն տեղում, էջ 439:

[31] Նույն տեղում, էջ 441:

[32] Նույնը:

[33] Նույն տեղում, էջ 442:

հասա-բակական բարօրությանը և ազգային առաջադիմությանը միասնաբար նպաստելը։ Փաստորեն՝ մտածողը ազգային կեցությանը համահունչ է համարում ***պետության կառույցի ազվապետական ձևը,*** որն անտիկ քաղաքական փիլիսոփայության մեկնաբանությամբ՝ «առաքինություն-ներով օժտված լավագույնների կառավարումն» է։ Բայցև Խրիմյանը պետության կառույցի անտիկ մոդելը լրացնում է ժողովրդավարության իր գաղափարներով։

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում վերլուծվում են Մկրտիչ Խրիմյանի փիլիսոփայա-քաղաքական հայացքները «Սիրաք եւ Սամուէլ» աշխատության մեջ։ Ըստ մտածողի՝ իշխանության, օրենքի և իրավունքի աղբյուրը Աստվածն է։ Մարդու հասարակական գործունեության հաջողության երաշխիքը բնական ու բարոյական օրենքների իմացությունն է։ Հիմնվելով աստվածադիր օրենքների վրա՝ Խրիմյանը բնական անհավասարության օրենքը մեկնաբանում է որպես մարդկային հասարակությունն ամրապնդող, միասնականացնող հզոր գործոն։ Ըստ նրա՝ մարդիկ հավասար են միայն Աստծո առջև։ Սակայն ողջ Տիեզերքը գործառում է անհավասարության օրենքով, որն առկա է և՛ կենդանական աշխարհում, և՛ մարդկային՝ հասարակական կյանքում։ Խրիմյանը չի ընդունում միապետական-կայսերական կառավարման ձևը, որի օրոք՝ անտեսվում են Աստվածային օրենքներն ու ժողովուրդների բնական իրավունքները։ Հետևելով անտիկ դարաշրջանի փիլիսոփաներին՝ նա ազնվապետությունն է համարում պետության կառույցի լավագույն ձևը։ Բայցև պետության կառույցի անտիկ մոդելը լրացնում է ժողովրդավարության իր գաղափարներով։

Բանալի բառեր. Մկրտիչ Խրիմյան, «Սիրաք եւ Սամուէլ» աստվածային-բնական օրենք, բնական անհավասարության օրենք, ազնվապետություն, ժողովուրդ-իշխանություն հարաբերակցություն։

ФИЛОСОФСКО-ПОЛИТИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ МКРТИЧА ХРИМЯНА В РАБОТЕ "СИРАК И САМУЭЛ"

Лилит Сарвазян

Кандидат философских наук, доцент

Старший научный сотрудник Института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

В статье анализируются философско-политические взгляды Мкртича Хримяна в работе “Сирак и Самуэл”. Источником власти, закона и права мыслитель считает Бога. Залог успеха социальной деятельности человека - знание естественных и нравственных законов. Основываясь на божественных законах, Хримян трактует закон естественного неравенства как мощный фактор, укрепляющий и объединяющий человеческое общество. По его словам, люди равны только перед Богом. Однако вся Вселенная действует по закону неравенства, она существует как в животном мире, так и в общественной жизни человека. Хримян не приемлет монархию, имперское правление, при котором игнорируются Божественные законы и естественные права народов. Следуя античным философам, он считает аристократию лучшей формой государственного устройства. Но Хримян дополняет античную модель государственного управления своими идеями демократии.

Ключевые слова: Мкртич Хримян, “Сирак и Самуэл”, божественные и естественные законы, закон естественного неравенства, аристократия, соотношение народа и власти.

MKRTICH KHRIMYAN'S PHILOSOPHICAL-POLITICAL VIEWS IN THE WORK “SIRAK AND SAMUEL”

Lilit Sarvazyan
Candidate of Philosophical Sciences, Associate Professor
Senior Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

SUMMARY

The article analyzes the philosophical-political views of Mkrtich Khrimyan in the work “Sirak and Samuel”. According to the thinker, God is the source of power, law and right. The guarantee of the success of human social activity is the knowledge of natural and moral laws. Based on divine laws, Khrimyan interprets the law of natural inequality as a powerful factor that strengthens and unites human society. According to him, people are equal only before God. However, the whole Universe operates according to the law of inequality, it exists both in the animal world and in human social life. Khrimyan does not accept the monarchy-imperial government, during which the Divine laws and the natural rights of the peoples are ignored. Following the philosophers of antiquity, he considers aristocracy the best form of state structure. But

Khrimyan complements the antique model of state governance with his ideas of democracy.

Key words: Mkrtich Khrimyan, “Sirak and Samuel”, Divine and natural laws, the law of natural inequality, aristocracy, people-government relations.

ИЗМЕНЕНИЕ ХУДОЖЕСТВЕННОЙ КОММУНИКАЦИИ. ОТ АВАНАГАРДА К ЦИФРОВОМУ ИСКУССТВУ

Светлана Арзуманян
Кандидат философских наук, доцент,
старший научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА

С самого начала XX века эстетика, как философия искусства, встала перед сложной проблемой осмысления многих процессов, протекающих в сфере современного искусства. Никак не поддаваясь однозначной оценке, некоторые из них становились причиной серьёзных споров. Не исключено, что теоретическая мысль просто не поспевала за бурным развитием художественной практики, активно реагирующей на технические инновации и пытающейся использовать предоставленные ими возможности, ищущей новые пути для выражения возникающих идей. Действительно, с одной стороны, нужно было осмыслить процесс становления новых, технических видов искусства, их необычную специфику, а с другой – выявить причины активизации поиска совершенно нетрадиционных приёмов и методов творчества в традиционных его видах, понять их характер и сущность.

Думаем, что эстетики и теоретики искусства, привыкшие к тому, что искусство должно было строго следовать за нормативами, установленными теорией, не были готовы к осмыслению столь радикальных изменений, происходящих в художественной практике и поэтому, в некотором смысле, были застигнуты врасплох. Благо эта ситуация отчасти компенсировалась тем, что представители различных авангардных художественных направлений, активно следующих друг за другом, в частности - футуризма, дадаизма, конструктивизма, сюрреализма и т.д., по существу, сами обеспечивали себе теоретический фундамент, наряду с произведениями искусства, представляя и программу своих действий, чаще всего зафиксированных в форме манифестов. Если попытаться выявить основную направленность и цель этих программ, то прежде всего следует обратить внимание на призыв расшатать основы “старого” искусства, отказаться от всего “устаревшего” в нём, под